

ԻՍՐԱՅԵԼ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է Երուսաղեմում, 1998թ. հոկտեմբերի 29-ին:

Ստորագրող կողմերն են՝ ՀՀ կառավարությունը և Իսրայելի կառավարությունը, Համագործակցության շրջանակներն են՝

- Ուղիղ կապերի հաստատում միմյանց գիտաբժշկական հաստատությունների և կազմակերպությունների միջև.

- Նոր սարքավորումների, դեղամիջոցների և տեխնոլոգիական նորարարությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, գրականության, ուսուցողական նյութերի փոխտրամադրում

- Մասնագետների փոխայցելություններ՝ ստաժավորման, փորձի և գիտելիքների փոխանակության նպատակով.

- Իրենց երկրներում կազմակերպվող միջազգային համաժողովների և սիմպոզիումների փոխադարձ հրավիրում.

- Համագործակցություն բժշկության և առողջապահության բնագավառում, փոխադարձաբար համաձայնեցված այլ ուղղություններով.